

891.996

Թ-33



ԼՅՈՒՍԻ
ԹԱՐԳՅՈՒԼ

ԻՍԿԱԿԱՆ ՀԱՆՏԵԼՈՒԿ

ՊԵՏՂՐԱՏ
ՅԵՌԵՎԱՆ

30 MAY 2011

891.995

ԼՅՈՒՍԻ ՔԱՐԳՅՈՒԼ

P-33

W

Ի Ս Կ Ա Կ Ա Ն Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

*

100
20

Պ Ե Տ Շ Ր Ա Տ

ՀԼԿՑԵ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՄԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԹԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1987



1

Փոքրիկ Մարջիկն ու Նազիկը և վազվզում ե-
 փն թիթեռների յետևից, և զրուցում իրար հետ:
 — Այսօր իմ մայրիկը մեր
 Չալիկ հավին թուխս զրեց,—
 ասաց Նազիկը:



— Իմ տատիկն ել մեր Պու-
 պուշ հավին թուխս զրեց,—
 պատասխանեց Մարջիկը:
 — Ի՞նչ՞ ձու յե զրել քո տատիկը հավի տակ:
 — Տասնյերեք:
 — Ի՞նչ քիչ: Իսկ մերը՝ տասնհինգ է, տասնը-
 հինգ,— հպարտ բացականչեց Նազիկը:
 Մարջիկը գլուխը կախեց:
 «Ինչո՞ւ պիտի իմ տատիկն ել տասնհինգ ձու
 չզներ»,— մտածեց նա:



1290
38

Քիչ հետո վաղեց տուն, մտալ ցախատունը,
 լոշտեղ հավերը, բաղերը ձու եյին ածում և վոր-
 ւեղ թուխս եր նստել Պուպուշիկը:



Մարջիկը վերցրեց յերկու մե՛—ե՛—ծ ձու, դրեց
 թխականի տակ և շտապ դուրս յեկալ ցախատանից
 ու գնաց պարտեզ՝ նազիկի մոտ:

2

Յերբ նա տուն յեկալ, տատիկը շատ հուզված
 եր յերևում: Մտնում եր ցախատուն, շուռ ու
 մուռ տալիս կողովները, ինչ վոր բան եր փնտրում:

—Ի՞նչ ե պատահել, տատի ջան,—հարցրեց
 Մարջիկը:

—Յերկու ձու պակաս ե, բալիկ ջան,—մղկը-
 տաց նա:—Ախր յես ինքս եյի հաշվել, թե քանի
 ձու կար կողովի մեջ, իսկ հիմի պակաս ե: Իսկա-
 կան հաներուկ ե:

Մարջիկը խորհրդավոր կերպով ժպտաց, բայց
 չասաց, վոր ինքն ե վերցրել: Նա ուզում եր, վոր
 հետո զարմանար տատիկը:

—Տատի, վոր հավի տակ տասներեք ձու դնեն,
 քանի՞ ձուտ դուրս կգա:

—Տասներեք:

—Իսկի յել չե, տասնհինգ,—պնդեց Մարջիկը:

—Տասներեքից տասներեք դուրս կգա,—առար-
 կեց տատը:

—Իսկ յես ասում եմ տասնհինգ,—պնդեց Մար-
 ջիկը:

—Հավ, հետո կտեսնենք,—ասաց տատը և նո-
 րից գնաց կորած ձվերը փնտռելու:

—Իհարկե՛, հետո կտեսնենք,—ծիծաղեց Մար-
 ջիկը:

3

Անցան որեր, շաբաթներ:

Պուպուշիկը դեռ կռթում եր, կռթկռթում և
 ամբողջ ժամանակ թևերը փռած, նստում ձվերի
 վրա: Նա նիհարել եր, ուտելը մոռացել և յեթե
 տատիկը նրան ուժով չկերակրեր, վոչ կուտ կու-
 տեր և վոչ ել շուր կխմեր:

Յերբ յերեք շաբաթը լրացալ, Պուպուշն ախաւջ
 դրեց.

—Թ՛րկ—Թ՛րկ—Թ՛րկ... Ձվերի նե սից թըխկ-
 թըխկացնում են:

5

Պուպուշ մայրիկն ուրախացավ: Կտկտային կանգնեց և կտուցի զգուշ հարվածներով սկսեց կտարտել ձվերը:

Այդ ժամանակ յեկավ տատիկը: Վազելով յեկավ նաև Մարջիկը: Հրճվանքից ու անհամբերու-



թյունից նրա սիրտն արագ բարբախում էր: Վերջապես հասել է ժամը և տատիկը, միամիտ տատիկը, ինչպես պիտի զարմանա, յերբ իսկապես տասներեք ձտի փոխարեն տասնհինգ տեսներ:

— Մարջիկ, համբիր տեսնենք քանի՞ հատ է, — դիտմամբ ասաց տատիկը: — Ի՞նչ համբիր, իսկ յես թեփ շաղախեմ նրանց համար:

Մարջիկը ժպտաց և սկսեց համբեր:

— Մեկ, յերկու, յերեք, չորս, ո՛ւթ, տաս, տասներեք, տասնչորս, տասնհինգ, — դիտմամբ ավելի բարձր ասաց նա և սպասողական կերպով նայեց տատիկին:

— Քանի՞, քանի՞, — զարմացավ տատիկը:

— Տասնհինգ: Ասում եյի չե՞, վոր տասներեք ձվից տասնհինգ ձուտ դուրս կգա, — բացականչեց նա և նրա աչքերը, դեմքը, զանգուր մազերն անգամ փայլեցին յերջանկությունից:

Տատիկն, իհարկե, չհավատաց, անձամբ համբեց:

— Ես քեզ մի շուխտ, ես քեզ յերկու, յերեք, չորս շուխտ, հինգ, վեց, յոթ շուխտ, յոթ ու կես ...

Յեվ նրա շվարած հայացքը կանգ առավ վերջին յերկու ձտերի վրա:

Այդպես ել հանելո՞ւկ: Ախր նա իր ձեռքերով թխականի տակ տասյերեք ձու էր դրել, մինչդեռ դուրս էր յեկել տասնհինգ ... Ախր նա իր ձեռքով էր Պուպուշիկի տակ հավի ձու դրել, հապա ի՞նչու բոլորն ել հավի ձտեր չեյին:

— Յերկու մե՛-եծ ձվերը յես եմ դրել հավի տակ: Իրա համար ել յերկուսը մե՛-եծ են դուրս յեկել, — խոստովանեց Մարջիկը և իսկույն ավելացրեց:

— Բա ինչո՞ւ, ինչո՞ւ պիտի մեր Պուպուշիկը տասներեք ձուտիկ հաներ, իսկ Նազիկենց Չափիկ՝ տասնհինգ:

Տատը, յեղելությունն իմանալով, մատը կծեց, մեկ բարկացավ, մեկ համբուրեց Մարջիկին և դրանով ել նրա զարմանքն անցավ:

Տատիկի զարմանքը վերջացավ, սկսվեց Պու-
պուշիկի զարմանքը:

Յերրորդ տարին եր, ինչ նա թուխս եր նստում,
ճտեր հանում, բայց այդպիսի ճտեր, ինչպես այդ



յերկուսն եյին, յերբեք չեր հանել, մարմինը տա-
փակ, յերկար, կտուցը տափակ, յերկար, իսկ ձայ-
նը: Չայնը տեսքիցն ել անճոռնի յեր:

Նա մոլորված նայում եր այդ գուլգին, անպա

մյուս գեղեցիկ ճուտիկներին և նրա հավային ու-
ղեղը չեր կարողանում հանելուկը լուծել:

Մի որ մայրը նրանց փողոց տարավ:

Փողոցով մի առու յեր հոսում: Չարմանալի
ճուտիկներն առուն տեսան թե չե, կաղեկաղ, որոր-
վելով վաղեցին և Չուրն ընկան:

Մայրը վախից ճչաց, թռավ ափից-ափ, վա-
զեց նրանց յետևից:

— Իուրս յեկե՛ք, դո՛ւրս յեկե՛ք, անպիտաններ:

Անճոռնի ճուտիկներն ուշադրություն չդարձ-
րին: Մայրն ստիպված յեղավ աքաղաղին ողնու-
թյան կանչել:

— Վա՛յ, ամա՛ն, շո՛ւտ, շո՛ւտ, հասիր, գժվել են
իմ բալիկները, Չուրն են մտել, դուրս չեն գալիս,
կխեղզվին:

Աքաղաղը պատի վրայից իսկույն ցած թռավ:

— Կը՛տ, կը՛տ, կը՛տ, կը՛տ, — խիստ հանդիմանեց նա:

Չարմանալի ճուտիկները նրանից ել չվախե-
ցան: Նրանք հանդարտ լողում եյին ջրի յերեսին:

— Կա՛փ—կա՛փ—կա՛փ:

— Կը՛տ, կը՛տ, կը՛տ, կը՛տ, անհնազանդներ:

— զայրացան Պուպուշիկն ու աքաղաղը:

Պատասխանի փոխարեն այլանդակ ճուտիկները
սուզվեցին ջրի մեջ և վտանները ցցեցին:

Պուպուշ մայրիկը համոզված լինելով, վոր ճտերն
արդեն խեղզվեցին, սարսափից այնպես ճչաց, վոր
խաղը թողած, Մարջիկը շնչասպառ հասավ, նրա
հետևից ել քոթոթ շնիկը:

— Այ դու հիմար Պուպուշ: Ինչո՛ւ յես վախե-
նում, — ծիծաղեց Մարջիկը: — Բաղիկները հո չեն
խեղզվում: Նրանք վոր գլուխները կոխում են
ջրի մեջ, ձուկ են բռնում, ձո՛ւկ:

82
0521

023

Պատ. խմբադիր՝ Հ. Հայրապետյան
Տեխ. խմբադիր՝ Ան. Գառնապետյան
Սրբադրիչ՝ Թ. Հովակիմյան



Գլավիտի լեզուր՝ Կ—4704, Հրատ. 4180
Պատվեր 1004, Տիրաժ 5000.
Թուղթ 62x94 Տպագրական 3/4, Մամուլ.
Մեկ մամուլում 30720 նիշ, Հեղինակային 1/2 մամ.
Հանձնված է արտագրության 20 հուլիսի 1937
Ստորագրված է տպագրության 4 դեկտ. 1937
Գինը 60 կոպ

Պետրասի տպարան, Յերեվան Լենինի փող. 65

«Ազգային գրադարան»



NL0400240

8659

1960 4th

ATOPH TAPPOK
HAC TOH HAT SARA LAMA
HO A H C P LAMA